Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-558-30.06.2014-SS-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-262 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. «ա» գործոնով և 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող, ինչպես նաև սույն հոդվածի 7-րդ մասում նշված համայնքների բյուջեներին նախատեսվող դոտացիայի ընդհանուր գումարը չպետք է պակաս լինի հաշվարկվող տարվա համար նախատեսվող դոտացիայի ընդհանուր գումարի 50 տոկոսից, իսկ «բ» գործոնով համայնքների բյուջեներին նախատեսվող դոտացիայի ընդհանուր գումարը՝ 30 տոկոսից:

Սույն հոդվածի իմաստով հաշվարկվող տարին այն տարին է, որի համար հաշվարկվում են դոտացիաները:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և դրա գործողությունը տարածվում է 2015 թվականի և դրանից հետո՝ պետական բյուջեներից համայնքների բյուջեներին հատկացվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի կողմից 1-ին ընթերցմամբ ընդունված «Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկության նպատակը
ՀՀ կառավարություն	Առաջարկվում է՝ 1. Օրենքի նախագծի վերնագրից հանել «և լրացում» բառերը. 2. Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ « «ա» գործոնով և 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող, ինչպես նաև սույն հոդվածի 7-րդ մասում նշված համայնքների բյուջեներին նախատեսվող դոտացիայի ընդհանուր գումարը չպետք է պակաս լինի հաշվարկվող տարվա համար նախատեսվող դոտացիայի ընդհանուր գումարի 50 տոկոսից, իսկ «բ» գործոնով համայնքների բյուջեներին նախատեսվող դոտացիայի ընդհանուր գումարը՝ 30 տոկոսից: Սույն հոդվածի իմաստով հաշվարկվող տարին այն տարին է, որի համար հաշվարկվում են դոտացիաները:»:	Առաջարկությունները կրում են շարադասական բնույթ